ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.08.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/173

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.07.2020թ. թիվ 26/26-1/11387-2020 գրությամբ «Մոնոպրինտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 28.07.2020թ. թիվ 04/31.2/19298-20 գրության հիման վրա 30.07.2020թ. թիվ 26/26-1/11387-2020 գրությամբ նախաձեռնել է «Մոնոպրինտ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Մոնոպրինտ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Մոնոպրինտ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Մոնոպրինտ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/173 ընթացակարգի շրջանակներում 07.08.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 28.07.2020թ. թիվ 04/31.2/19298-20 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուի կողմից 30.06.2020թ. կազմակերպվել է «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-20/101» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 1-ին, 2-րդ, 5-24-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել «Մոնոպրինտ» ՍՊԸ-ն և ճանաչվել ընտրված մասնակից, այնուհետև վերջինիս Armeps էլեկտրոնային գնումների համակարգով (հետայսու նաև՝ Համակարգ) և էլեկտրոնային փոստով 21. 07. 2020թ. ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ: Սակայն «Մոնոպրինտ» ՍՊԸ-ն 22. 07.2020թ. էլեկտրոնային փոստով տեղեկացրել է, որ հրաժարվում է պայմանագիր կնքելուց և Համակարգով մերժել պայմանագրի շնորհումը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/173 ընթացակարգի շրջանակներում 07.08.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2020/173 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2020/173 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կարիքների համար տպագրված գրքերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-20/101» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մոնոպրինտ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 15.07.2020թ. «Մոնոպրինտ» ՍՊԸ-ն՝ Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 5-24-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից, և որոշվել է անգործության ժամկետի ավարտից հետո վերջինիս ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.07.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 5-24-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից՝ «Մոնոպրինտ» ՍՊԸ-ին, էլեկտրոնային գնումների Armeps համակարգով 21.07.2020թ. շնորհվել է պայմանագիր, ինչպես նաև էլեկտրոնային եղանակով՝ նույն համակարգով և էլ. փոստի միջոցով տրամադրվել է պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

4. Նույն արձանագրության 1.2 կետի համաձայն՝ «Մոնոպրինտ» ՍՊԸ-ն էլեկտրոնային գնումների Armeps համակարգով 22.07.2020թ. մերժել է իրեն ներկայացված առաջարկը և պայմանագիրը կնքելուց հրաժարվելու մասին ծանուցել քարտուղարի էլ. փոստին:

5. «Մոնոպրինտ» ՍՊԸ-ն 21.07.2020թ. Ընթացակարգի քարտուղարի karine.badalyan@escs.am էլեկտրոնային հասցեին ուղղված գրությամբ հայտնել է, որ «Մոնոպրինտ» ՍՊԸ-ն հրաժարվում է «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-20/101» ծածկագրով պայմանագիրը կնքելուց:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.07.2020թ. թիվ 26/26-1/11387-2020 գրությունը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 28.07.2020թ. թիվ 04/31.2/19298-20 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կարիքների համար տպագրված գրքերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-20/101» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մոնոպրինտ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 15.07.2020թ. «Մոնոպրինտ» ՍՊԸ-ն՝ Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 5-24-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից, և որոշվել է անգործության ժամկետի ավարտից հետո վերջինիս ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.07.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 5-24-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից «Մոնոպրինտ» ՍՊԸ-ին, էլեկտրոնային գնումների Armeps համակարգով 21.07.2020թ. շնորհվել է պայմանագիր, ինչպես նաև

էլեկտրոնային եղանակով՝ նույն համակարգով և էլ. փոստի միջոցով տրամադրվել է պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Նույն արձանագրության 1.2 կետի համաձայն՝ «Մոնոպրինտ» ՍՊԸ-ն էլեկտրոնային գնումների Armeps համակարգով 22.07.2020թ. մերժել է իրեն ներկայացված առաջարկը և պայմանագիրը կնքելուց հրաժարվելու մասին ծանուցել քարտուղարի էլ. փոստին:

«Մոնոպրինտ» ՍՊԸ-ն 21.07.2020թ. Ընթացակարգի քարտուղարի karine.badalyan@escs.am էլեկտրոնային հասցեին ուղղված գրությամբ հայտնել է, որ «Մոնոպրինտ» ՍՊԸ-ն հրաժարվում է «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-20/101» ծածկագրով պայմանագիրը կնքելուց:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ուսումնասիրելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից Ընթացակարգի շրջանակներում ներկայացված հիմքերը, դրանք համադրելով գործում առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ «Մոնոպրինտ» ՍՊԸ-ն թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, քանի որ ընտրված մասնակից ճանաչվելուց հետո՝ 21.07.2020թ., Պատվիրատուին ուղղված գրությամբ հրաժարվել է պայմանագիր կնքելուց՝ 22.07.2020թ. մերժելով նաև Համակարգով իրեն ներկայացված պայմանագիր կնքելու առաջարկը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.07.2020թ. թիվ 26/26-1/11387-2020 գրությամբ «Մոնոպրինտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Մոնոպրինտ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**